ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՂՐՂԶՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մարտի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ղրղզստանի խորհրդարանի ժողովրդական ներկայացուցիչների ժողովի նախագահ Ալմամբեդ Մատուբրահիմովի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի ուղեկցությամբ:

Վեհարանի ընդունելությունների սրահում հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն. Մատուբրահիմովն իր խորին հարգանքն ու ակնածանքն արտահայտեց հայ ժողովրդի դարավոր մշակույթի, նրա հոգեւոր կենտրոն Ս. Էջմիածնի նկատմամբ:

Ջերմ զրույցի ընթացքում մեծահարգ հյուրը Վեհափառ Հայրապետին ամփոփ տեղեկություններ տվեց երկու խորհրդարանների միջեւ կնքված համագործակցության պայմանագրի եւ առաջիկայում կայանալիք Հայաստանի ու Ղրղզստանի նախագահների հանդիպման մասին:

Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ երկու ժողովուրդներն էլ գտնվում են անցումային դժվարին փուլում եւ միասնաբար, եկեղեցու աջակցությամբ պետք է հաղթահարվեն այդ դժվարությունները: Վեհափառ Հայրապետը ընդգծեց նաեւ Եկեղեցու՝ ժողովուրդների խաղաղությանն ուղղված ջանքերը՝ վերհիշելով 1994 թ. հունիսին Մոսկվայում Ալեքսիյ Բ Պատրիարքի եւ շեյխ ուլ իսլամ Փաշա Զադեի հետ ստորագրված միասնական Հայտարարությունը, որտեղ շեշտվում էր այն միտքը, որ պատերազմները երբեք չպետք է կրեն կրոնական բնույթ, իսկ ժողովուրդների միջեւ առաջացած խնդիրները բացառապես պետք է լուծվեն խաղաղ, բանակցային ճանապարհներով:

Ապա Նորին Սրբությունը հյուրերի խնդրանքով տեղեկություններ տվեց Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի կառուցվածքի եւ կրթական համակարգի վերաբերյալ:

Հանդիպումից հետո հյուրերը Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ շրջեցին Վեհարանի սրահներում եւ հետաքրքրությամբ ծանոթացան մեր ազգային մշակույթի մասունքներին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մարտի 8-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Հարավային Ռուսաստանի Նորաստեղծ թեմական խորհրդի անդամներին՝ թեմական առաջնորդ Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի գլխավորությամբ:

Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց նորաստեղծ թեմական խորհրդի անդամներին և հանգամանորեն ներկայացրեց խորհրդի կողմից մշակված աշխատանքային ծրագրերը: Հոգեշնորհ Հայրը մասնավորապես նշեց, որ շուտով տեղերում ևս ստեղծվելու են համապատասխան ծխական խորհուրդներ, որոնք մեծապես կնպաստեն, որպեսզի մարդիկ ավելի մոտենան Եկեղեցուն, առավել հզորանա հավատը նրանց մեջ:

Վեհափառ Հայրապետը մեծ ուրախությամբ ողջունելով թեմական խորհրդի ծնունդը՝ հաջողություններ մաղթեց նրա ժեռնարկներին և նշեց, որ Մայր Աթոռը անհրաժեշտ օգնություն և աջակցություն կցուցաբերի թեմի աշխատանքները ճիշտ կազմակերպելու գործում: Նորին Սրբությունն ընդգծեց նաև, որ թեմական խորհուրդների ստեղծումով ժողովրդի մեջ կաշխուժանա հետաքրքրությունը դեպի հոգևոր կյանքը, դեպի Հայաստանյայց Ս. Եկեղեցին և առավել գործուն կդառնա կապը Մայր Աթոռի և թեմերի միջև:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մարտի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ՌԴ մշակույթի նախարար Եվգենի Սիդորովը՝ տիկնոջ հետ, և Կրեմլի թանգարանների գլխավոր տնօրեն Իրինա Ռադիմցևան՝ ուղեկցությամբ Հայաստանի մշակույթի նախարար Արմեն Սմբատյանի:

Պրն. Սիդորովը, Վեհափառ Հայրապետին փոխանցելով Ալեքսիյ Բ Պատրիարքի ողջույնները, տեղեկացրեց, որ Հայաստան իրենց այցելության գլխավոր նպատակներից մեկը հունիսին Կրեմլի սրահներից մեկում բացվելիք ցուցահանդեսի կապակցությամբ անհրաժեշտ պայմանավորվածություն ձեռք բերելն է: Ցուցահանդեսը նվիրվելու է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին և ցուցադրանքում տեղ կգտնեն բացառապես Ս. Էջմիածնի թանգարանների արժեքները: Ինչպես նշեց տիկ. Ռադիմցևան, ցուցահանդեսի բացումը կհամընկնի մեկ այլ կարևոր հոբելյանի ևս՝ Մոսկվայի հիմնադրման 850-ամյակին:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով այդ գեղեցիկ ժեռնարկը, ողջունեց նաև այն սերտ գործակցությունը, որ առկա է Ռուսաստանի և Հայաստանի մշակույթի նախարարությունների միջև, և շեշտեց նաև, որ Եկեղեցին պատրաստ է իր զորակցությունը ցուցաբերել այդ գործակցությանը:

Զրույցից հետո հյուրերը ծանոթացան Ս. Էջմիածնի թանգարաններին:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, երկու նախարարությունների աշխատակիցներ:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի գյուղատնտեսության նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարար Վասիլիոս Գերանիդիսի գլխավորությամբ: